

ցելած ատեն կը տեսնէ որ ատենուան հայոց «պատրիարքը կապերտի մը վրայ կեցած է եղեր բոլորիկ ոտքերով»: Իսկ «խորանին առջև, գետինը սալարկուած է ու վրան գորգերով ծածկուած»<sup>(72)</sup>:

Տուֆիտտի վկայութենէն զատ ունինք նաև վկայութիւնը Ճորճ Սանտիս անգլիացիին, որ կը վկայէ թէ 1610-ին անգլիացի վաճառականներ Կ. Պոլսոյ մէջ հայ վաճառականներէ կը գնէին Անգլիա տանելիք իրենց ապրանքները, օրինակ, հում մետաքս, պարսկական գորգեր եւն.: Նոյն ուղեգիրը կը յիշէ որ «երբ Սուլթանը (Ահմէտ Ա Ղազի, 1603-1617) դեսպաններ կը հիւրասիրէ, կը նստի ճեմակ մարմարեայ սրահի մը մէջ... ցած զահոյքի մը վրայ բազմած, որուն վրայ սփռուած էին հրաշալի գորգեր, զմաշիլի արհեստով պատրաստուած հանգստաւէտ բարձերով»<sup>(73)</sup>: Իսկ ուրիշ անգլիացի մը, Սըր Բոլ Ռայքըդ, 1692ին նկարագրելով պարսից զեսպանին Կ. Պոլիս ժամանելը, Սուլթանին եւ արքունեաց համար բազմաթիւ ընծաներով, կ'ըսէ. «ընծաները 60 ուղտերու բեռնուած... բազկացած էին շատ ճոխ պարսկական գորգերէ՝ ոսկիով ընդելուզեալ»<sup>(74)</sup>: Ան մանրամասնելով կը յիշէ որ 60 ուղտերուն «30 հատը բեռնաւորուած էին մետաքսով ու ոսկեթելով բանուած, հազուադիւս զանազան գոյներով երանգաւորուած գորգերով»<sup>(75)</sup>: Նոյնիսկ պարսիկ զեսպանը իր տունը կահաւորած էր Պարսկաստանէն հետը բերած գորգերով:

Անտարակոյս, ուրեմն, Կ. Պոլիս Սուլթանական պալատներէն ըսկրեսալ կը ստանար գորգերուն մեծագոյն եւ ճոխագոյն մասը Պարսկաստանէն: Նոյն ատեն ինչ որ կարելի էր տեղական արտադրութիւն սեպել հոն գաղթած հայ արհեստաւորներու գործերն էին: Մինչ գորգի առևտուրը ժԶ դարէն սկսած գոնէ կեդրոնացած էր Հայոց ձեռքը: ԺԸ դարուն դեռ «Հայերը բերում էին գորգեր Թուրքիայից եւ Պարսկաստանից» դէպի արեւելեան եւ կեդրոնական Եւրոպա<sup>(76)</sup>:

Հաւելէյ գրելով Թուրքիոյ հայոց մասին կը վկայէր. «Իրր աշխատաւոր, հայերը յաճախ ծառայած են Թուրքերուն, եւ մասնաւորապէս իրր ոսկերիչ ու արծաթագործ անոնք առանց կարողութեան

(72) Գ. Հնասէր: - «Կոչնակ», Նիւ Եորք, 1928, էջ 1515: 1932, էջ 1217:

(73) A Relation of a Journey Begun An. Dom. 1610. — London, 1627, p. 75. Իսկ Թուրքիոյ տուներուն «գետնին մեծագոյն մասը, քիչ անցուզարձ ունեցող մասը, ծածկուած է թրքական գորգերով, որուն վրայ քալած ատենին կօշիկնին կը հանեն» (էջ 65. անդ):

(74) The History of the Turks 1679-1700. p. 433.

(75) Անդ, էջ 434. Ա սիւն: Վաւերաթուղթերու շարքին մէջ 1700ին Սուլթանին կողմէ յաղթական Աւստրիոյ Կայսեր մատուցուած ընծաներուն շարքին կը յիշուին նաև «չորս պարսկական գորգեր, ոսկիով հիւսուած: Չորս ուրիշ գորգեր՝ թրքական գործ» (Անդ, էջ 604. Բ սիւն): Պարսկականները հաւանաբար 1692ին Պարսկաստանէն նուէր ստացուածներն ըլլալու են, որոնց մասին վերը տեսանք: Յիշուած թրքական գործ գորգերը հին արուեստի գործեր ըլլալու էին, քանի որ ժԸ դարուն, ըստ W. Etonի, Թրքաց «գորգերը իրենց առաջնակարգ սրահը կը պարտին միայն անոնց համար գործածուած նիւթերուն»: (A Survey of the Turkish Empire. Vol. II, London, 1799, p. 215.

(76) «Հայրենիք» ամսագիր, 1932, Յուլիս, էջ 71: